ԼՂԻՄ երբ աշխատանքը բերկրանք չէ

Ղարաբաղցի խաղողագործները չէին էլ կարող ենթադրել, որ իրենց աշխատանքի վերջնական արդյունքների վրա կանդրադառնան ոչ միայն աննպաստ եղանակային պայմանները, այլև ազգային քաղաքականության սխալները: ԼՂԻՄ-ի պրոբլեմի լուծման անհասկանալի ձգձգումը, որը ռեգիոնում հանգեցրել է լարվածության ծավալմանը, գյուղի աշխատավորների առջև դրել է ուղղակի անլուծելի խնդիրներ: Օրինակ, ինչպե՞ս ավարտել խաղողի բերքահավաքը, երբ վառելիքի պակասի պատճառով կանգնած են փոխադրամիջոցները: Ինչպես արտադրանքը առաքել սպառողներին, եթե ոչ մի մեքենա չի կարող դուրս գալ մարզի սահմաններից: Ինչ տրամադրությամբ աշխատեն արևային ողկույզների ղարաբաղցի վարպետները, եթե Հայաստանում նրանց հայրենակիցները այս տարի այդպես էլ չհամտեսեցին արցախյան հողի քաղցր պտուղները: Հանրապետական ԽՍՀ-ի համար նախատեսված 2800 տոննա թարմ խաղողը ստիպված վերածեցին գինեհումքի: Գյուղատնտեսության մասնագետները լավ են պատկերացնում, թե ընդամենը ինչպիսի վնասներ կրեցին կոլտնտեսությունները ու խորհտնտեսությունները, քանի որ այդ մշակաբույսի սեղանի սորտերի գնման գները զգալիորեն բարձր են տեխնիկականների գներից:

Մարզի այսօրվա իրավիճակը ցույց է տալիս, որ պետությանը խաղողի վաճառքի ընթացիկ տարվա պլանը ինքնավար մարզը չի կատարի: Եթե հաջողվի նախատեսված 70 հազարի փոխարեն հանձնել 55 հազար տոննա, ապա դա էլ դրությունից ելք է, քանզի դեռ մնացել է ավելի քան 20 հազար տոննա բերք:

Զարմանք է հարուցում այն փաստը, որ Լեռնային Ղարաբաղի ադրբեջանական տնտեսություններին պատկանող և արտադրանքով բեռնված մեքենաների առջև, որպես կանոն, կանաչ լույս է վառված: Հաշվի չառնելով տեղական իշխանությունների կարծիքը, նրանք հումքը հասցնում են ԼՂԻՄ-ին սահմանակից Աղդամի շրջանի խաղողի վերամշակման կետեր: Բացի դրանից, այդ տնտեսությունները վառելիքաքսանյութերի հետ կապված դժվարություններ չունեն:

Այ քեզ բան: Մեկին ամեն ինչ, մյուսին՝ ոչինչ: Սակայն արցախցիները չեն համակերպվի նման բաշխմանը: Պատահական չէ, որ նրանք բարձրացրին Խորհրդային Հայաստանի հետ Լեռնային Ղարաբաղի վերամիավորման հարցը: Եվ մարդիկ մտադիր չեն ընկճվել: Ինչպես Արմենպրեսի թղթակցին հայտնեցին մարզային ագրոարդում, երկրամասի խաղողագործները հնարավոր և անհնար ամեն ինչ կանեն մնացած բերքը փրկելու համար:

Բայց գյուղի աշխատավորներին սպասում են նոր հոգսեր, որոնք այս անգամ կապված են առաջիկա ցանքի կամպանիայի հետ: Թեկուզ այն պատճառով, որ երկրի ուրիշ ռեգիոններից այստեղ ընտացվող սերմացուի մի մասը վագոններում երկար մնացել է Ադրբեջանի տարբեր երկաթուղային կայարաններում: Եվ եթե հաշվի առնենք, որ մարզի հիմնական հացահատիկային արտերը գտնվում են ցածրադիր գոտում, որը մոտ է ադրբեջանական շրջաններին, պարզ կդառնա, թե ինչու հիմա անվտանգ չէ հողագործների աշխատանքը: Այնինչ վաղուց ժամանակն է պատասխանատվության կանչել այն անձանց, ովքեր մարդկանց դրդում են հակահիրավական գործողությունների: Ի վերջո, կգա՞ արդյոք այդ օրը...

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ
(Արմենպրեսի սեփ. թղթ.)

ԼՂԻՄ